ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2018Թ. ՀՈՒՆԻՍԻ 27-ԻՑ 30-Ը ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (ԲԵՌԼԻՆ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**
   Վարդան Գևորգյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
   ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ / ԺԱՄԿԵՏԸ**
   Գերմանիայի Դաշնային Հանրապետություն (Բեռլին)/2018թ. հունիսի 27-ից 30-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
   ԱՃԹՆ միջազգային քարտուղարություն

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**
   Մասնակցել ԱՃԹՆ Խորհրդի նիստին, որը պետք է որոշում ընդուներ Հայաստանի Հանրապետության կողմից ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարությանը ներկայացված դիմումի վերաբերյալ:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**
   Համապատասխան հանձնաժողովի և Խորհրդի անդամներին պատվիրակության ներկայացուցիչների կողմից մանրամասնորեն նկարագրվեցին Ստանդարտի ներդրմանն ուղղված աշխատանքները՝ հաստատելու համար, որ դրանք իրականացվում են համապարփակ ձևով և հնարավորինս սեղմ ժամկետներում, իսկ ժամկետի երկարաձգումն անհրաժեշտ է ոչ թե թերացումների պատճառով, այլ բովանդակային առումով ավելի որակյալ ազգային զեկույց պատրաստելու նպատակով: Մասնավորապես, ներկայացվեցին՝

- ձեռնարկված նախնական ուսումնասիրության լայնամասշտաբ աշխատանքները՝ http://www.gov.am/u_files/file/ardyunaberakan-cragir/ARM_ArmeniaEITI_ScopingStudy_Mar%2015%20%202018%20(Secretariat).pdf,

- պետական հատվածի և մասնավոր ընկերությունների համար ԱՃԹՆ-ի ստանդարտին համապատասխան հաշվետվությունների ներկայացման պահանջ սահմանող օրենսդրական փաթեթի մշակման և ընդունման աշխատանքները. մինչ այդ իրականացվել էր այս ուղղությամբ օրենսդրական դաշտի համապարփակ վերլուծություն, փաթեթը ԲՇԽ-ի կողմից հաստատվել էր 2017 թվականի նոյեմբերին, ապա շրջանառվելուց հետո 2018 թվականի հունվարի 25-ին՝ նաև կառավարության որոշմամբ: Քանի որ փաթեթը ճանաչվել էր նաև անհետաձգելի, ապա հաջողվեց այն խորհրդարանում ընդունել արդեն մարտ ամսին,

- ազգային զեկույցի կազմման համար ՀԲ-ի դրամաշնորհի ներգրավման նպատակով քարտուղարության կողմից 2017 թվականի սեպտեմբերից սկսված բոլոր աշխատանքները,

որոնց արդյունքում այն հաստատվեց ՀԲ-ի կողմից 2018թվականի փետրվարին, իսկ կառավարության կողմից ստորագրվեց ապրիլին,

- Բազմադոնոր աջակցության պարագայում պետության կողմից իր հանձնառության շարունակականությունն ապահովելու պատրաստակամությունը ցույց տալու նպատակով պետական բյուջեի շրջանակներում ազգային քարտուղարության պահպանումը 2018 թվականի հունվարից,

- Բաց տվյալների սկզբունքներին համահունչ և էլեկտրոնային ստորագրության կիրառմամբ էլեկտրոնային պորտալի ստեղծման աշխատանքներ, որը նորարարական լուծում էր և, ազատելով թղթային հաշվետվություններից, անհամեմատ կբարձրացնի գործընթացի կազմակերպման արդյունավետությունը,

- Քարտուղարության կողմից հաշվետվությունների ձևաթղթերի կազմման բարդ աշխատանքների ստանձնումը՝ հաշվի առնելով, որ ժամկետի սղության պատճառով պետությունը չէր հասցնի 2018 թվականին ունենալ զեկույց և էլեկտրոնային պորտալ մշակել, եթե այլ երկրների պես այն պատվիրակվեր աուդիտորական ընկերությանը, տեղում լրացուցիչ տեղեկացվեց, որ ձևաթղթերն ու դրանց լրացման կարգն արդեն ընդունվել են կառավարության որոշմամբ, իսկ ծրագրավորողները սկսել են դրանց համապատասխան պորտալի մշակումը:

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Խորհրդի նիստի առաջին օրվա ավարտին հայկական պատվիրակությունն առանձին հանդիպում ունեցավ Խորհրդի նախագահ պրն. Ֆրեդրիկ Ռեհինֆիլդտի հետ, ով և նշեց, որ Խորհուրդը կարևորել է հատկապես կառավարության ուժեղ հանձնառությունը, չնայած վերջին քաղաքական փոփոխություններին, ինչը տեսանելի է ձեռնարկած բոլոր աշխատանքներից, ինչն էլ հիմք է հանդիսացել Խորհրդի կողմից դրական որոշման կայացման համար: Խորհրդի օրակարգային հարցերի հետ կապված կարևորվում է երկու ելույթ: Առաջինը բաց պայմանագրերի (Open Contracts) թեմայի քննարկումն էր, որը նշում էր, որ չնայած Ստանդարտը խրախուսում է, այլ չի պարտադրում անդամ երկրներին հրապարակային բացել ընդերքօգտագործողների հետ կնքված պայմանագրերը, իրենք տարիներ շարունակ աշխատում են այդ ուղղությամբ:

- Պատվիրակության կողմից նշվեց, որ Հայաստանի դեպքում ընդունված օրենքների շրջանակներում մենք արդեն իսկ քայլ առաջ ենք արել՝ սահմանելով պայմանագրերի հրապարակումը օրենքի պարտադիր պահանջ, որոնք արդեն հրապարակվել էին հենց Խորհրդի նիստի օրը: http://www.minenergy.am/page/571

- Մյուս հարցն անդամ երկրների կողմից անդամավճարի վճարման հարցն էր, որտեղ հատուկ նշվեց, որ Հայաստանը ժամանակին կատարել է համապատասխան վճարումը ի տարբերություն շատ այլ երկրների:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության բարձրաստիճան ներկայացուցիչները մինչ տարվա վերջ կայցելեն Հայաստան:

9. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Շարունակել աշխատանքները Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության շրջանակներում: